ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Ճամբարակ, (0265)22255, chambarak.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ՓԵՏՐՎԱՐԻ 2026 թվականի N 92-Ա

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՇՈՂԱԿԱԹ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2011թվականի դեկտեմբերի 29-ի N 1290-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետը, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 143–րդ հոդվածի 30-րդ մասով, հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064–Ա որոշմամբ ստեղծված Հայաստանի Հանրապետության համայնքների / բնակավայրերի/ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 28.11.2025թ. N 2/ փ-380 եզրակացությունը և Ճամբարակ համայնքի ավագանու 25.12.2025թ. N 105-Ա որոշումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Ճամբարակ համայնքին սեփականության իրավունքով պատկանող 05-074-0106-0127 կադաստրային ծածկագրով,Շողակաթ բնակավայր թիվ 17 հողամաս հասցեում գտնվող 0.02 հա գյուղատնտեսական նշանակության արոտավայրի նպատակային և գործառնական նշանակությունը փոխել էներգետիկայի,տրանսպորտի,կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների՝կապի հողերի:
2. Նշված փոփոխությունն արտացոլել Ճամբարակ համայնքի Շաղակաթ բնակավայրի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում և հողային հաշվեկշռում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Վ. ԱԴԱՄՅԱՆ**

2026թ. փետրվարի 09
ք. Ճամբարակ